



ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԻՆՉՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



Ձեռնարկ ուսուցիչների համար

With funding from

 Austrian
Development
Cooperation



unicef 

յուրաքանչյուր
երեխայի համար

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԻՆՉՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ձեռնարկ ուսուցիչների համար



Երևան 2022

Սույն ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ և Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսավորմամբ՝ «Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի» ծրագրի շրջանակում:

Ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի կամ Ավստրիական զարգացման գործակալության տեսակետները և քաղաքականությունը:

Հայաստանում **ՅՈՒՆԻՍԵՖ**-ի գործունեությանը ծանոթանալու համար այցելե՛ք www.unicef.am և www.babycef.am կայքերը:

Ավստրիական զարգացման գործակալության գործունեությանը ծանոթանալու համար այցելե՛ք www.entwicklung.at/en/countries/south-caucasus/armenia

«Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի» ծրագիրը նպատակ ունի ցույց տալու 21-րդ դարի հմտությունների կիրառման միջոցով դպրոցներում կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի հիմնախնդիրների վերաբերյալ ինտեգրված և բարելավված կրթական ծրագրերի և ուսումնառության կարևորությունը՝ համադրելով ուսումը համայնքների զարգացման և բարելավման հետ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների հետ համագործակցությամբ: Ծրագրին ավելի մանրամասն ծանոթանալու համար այցելե՛ք <https://uni.cf/3pTeFk3>

© ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ)

Նյութը վերահրատարակելու, կրկնօրինակելու, տպագրելու կամ թարգմանելու ցանկության դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրավոր թույլտվությունը՝ հարցում ուղարկելով հետևյալ հասցեին.

ՅՈՒՆԻՍԵՖ

Պետրոս Ադամյան փող. 14, Երևան, 0010
Էլ. հասցե՝ yerevan@unicef.org

Գրքի ստեղծման գործում ներդրման համար ՅՈՒՆԻՍԵՖ-ը շնորհակալություն է հայտնում՝ **հեղինակներ** Կարինե Հարությունյանին (փորձագիտական խմբի ղեկավար), Հեղինե Խաչատրյանին (մանկավարժական մոտեցումների փորձագետ) և **փորձագիտական խմբին**՝ Սիրինե Կոսյան (կլիմայի փոփոխության փորձագետ), Շողիկ Քեռոջերյան (ներառական կրթության փորձագետ):

ՅՈՒՆԻՍԵՖ-ը նաև շնորհակալություն է հայտնում Վիգեն Շիրվանյանին (Կլիմայի փոփոխության ծրագրի ղեկավար), Արմենուհի Հովակիմյանին (Սոցիալական քաղաքականության բաժնի ղեկավար) և Գրիգոր Սիմոնյանին (Կլիմայի փոփոխության, դեռահասների և համայնքների մասնակցության ծրագրի համակարգող) ձեռնարկի պատրաստման ընթացքում ցուցաբերած անգնահատելի աջակցության և համակարգման համար:

Խմբագիր՝ Ազնիվ Նասլյան

Գրքի ձևավորումը՝ Մկրտիչ Չանչանյանի

Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 15.02.2022 թ. 206-Ա/2 հրամանի՝ սույն ձեռնարկը երաշխավորված է որպես ուսումնական նյութ՝ դպրոցներում օգտագործելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	7
ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ	8
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՔԱՅԼԵՐԸ.....	22
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ.....	23
Քայլ 1. Նախագծի թեմայի ընտրություն.....	23
Քայլ 2. Հիմնախնդրի ընտրություն.....	25
Քայլ 3. Աշխատանքային խմբերի ձևավորում.....	27
Քայլ 4. Խմբերի ինքնուրույն աշխատանք. հետազոտություն.....	36
Քայլ 5. Ստացված արդյունքների միջանկյալ քննարկումներ.....	37
Քայլ 6. Կատարված աշխատանքի արդյունքների ներկայացում և գնահատում.....	38
Քայլ 7. Գործողությունների ծրագրի առաջարկ.....	42
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	44
ՀԱՎԵԼՎԱԾ. Ուսումնառության համընդհանուր ձևավորման (ՈՒՀԶ) սկզբունքները.....	45

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գաղտնիք չէ, որ արդի հասարակությունն ապրում է բոլորովին նոր իրողությունում, որտեղ զարգացումներն ամենատարբեր ոլորտներում ընթանում են աննախադեպ բուռն և արագ տեմպերով: Մարդկային քաղաքակրթության զարգացման այս փուլին հատուկ են գլոբալացումը, տեղեկատվական-հաղորդակցական և բարձր տեխնոլոգիաների հարածուն զարգացումը և մարդկանց առօրյայում դրանց դերի ու կիրառության աննախադեպ աճը: Եվ միանգամայն հասկանալի է, որ նման զարգացումները հանգեցնում են նոր ձեռքբերումների, նոր բացահայտումների ու նվաճումների, նոր առաջընթացի: Սակայն դրանք ի հայտ են բերում մարդկության համար նոր խնդիրներ ու մարտահրավերներ. գլոբալացվող արդի հասարակությունում համընդհանուր են դառնում ոչ միայն մարդկության առաջընթացի արդյունքներն ու նվաճումները, այլև մարդկային հանրության առջև ծառայած հիմնահարցերը՝ բնապահպանական խնդիրներ, տարերային, տեխնաժին և մարդածին էկոլոգիական աղետներ, գլոբալ տաքացում և կլիմայի փոփոխություններ, տեղեկատվական պատերազմներ, տեղեկատվական հոսքերի անկառավարելիություն, բռնություն և մարդկանց շահագործում, բախումներ և պատերազմներ, նոր հիվանդությունների ու համաճարակների տարածում և այլն: Այս հիմնախնդիրների լուծումները պահանջում են հասարակությունների և պետությունների, նրանց քաղաքական, հասարակական կառույցների և համակարգերի գործողությունների ու ջանքերի համատեղում, միասնական աշխատանք և պայքար: Այն պահանջում է վերանայել և վերաարժեքավորել մեր կյանքը, գնահատել, թե ինչպես է մեր կենսակերպն ազդում մեզ շրջապատող աշխարհի վրա:

Քննարկվող հարցերի շարքում հատկապես կարևորվում է կլիմայի փոփոխության հիմնախնդիրը:

Մարդկության և իրենց ապագայով մտահոգ երիտասարդները, դեռահասներն ամբողջ աշխարհում պայքարում են ջերմոցային գազերի օրեցօր ավելացող արտանետումների դեմ՝ կլիմայի փոփոխության տեմպերը նվազեցնելու, նրա մեղմացմանն ու հարմարվողականությանը նպաստելու համար: Շատ երիտասարդներ գիտակցում են այն բարդություններն ու օգուտները, որոնք ենթադրում են ցածր ածխածնային արտանետումներով արտադրությանն անցման անհրաժեշտություն, և շատերն արդեն իսկ ներգրավվել են և ակտիվորեն մասնակցում են գլոբալ երկխոսությունների, բանավեճերի ու քննարկումների՝ հասանելի ու նորարարական լուծումներ գտնելու համար: Երիտասարդության աշխատանքը կլիմայի փոփոխության վերաբերյալ կարևոր բաղադրիչ է նոր, համընդհանուր համաձայնագրի ստեղծման և քաղաքական ձգտումների բարձրացման համար: Նրանց աշխատանքն ու ջանքերը ոգևորում են շատերին: Հիմնախնդիրը սպառնում է բոլորին, հետևաբար հասարակությունների բոլոր անդամները, տարբեր շերտերի ներկայացուցիչները պետք է ակտիվորեն մասնակցեն խնդիրների բարձրացման և իրազեկման աշխատանքներին, նախաձեռնեն կրթական տարբեր ծրագրեր կամ ներգրավվեն դրանցում, նպաստեն բնության պահպանմանը, վերականգնվող էներգիայի աղբյուրների

օգտագործման խթանմանը, էկոլոգիապես մաքուր պրակտիկայի ներդրմանը և կլիմայի փոփոխության հետևանքները մեղմելուն ուղղված տարբեր, հատկապես կրթական նախագծերի իրականացմանը¹:

2015 թվականի սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում 193 անդամ երկրներն ընդունեցին «Կայուն զարգացման օրակարգը մինչև 2030 թվականն ընկած ժամանակահատվածի համար» և դրա շրջանակում՝ Կայուն զարգացման 17 նպատակները (ԿՁՆ), որոնք ուղղված են նվազեցնելու սովն ու աղքատությունը, պաշտպանելու և երաշխավորելու բոլոր մարդկանց խաղաղ ու բարեկեցիկ կյանքը Երկիր մոլորակի վրա: Կայուն զարգացման նպատակներից 13-րդը՝ գործողություն ի նպաստ կլիմայի, վերաբերում է կլիմայի փոփոխությանը²: Ընդ որում՝ Կայուն զարգացման մյուս նպատակները նույնպես ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են վերջինիս հետ:



Նկար 1. Կայուն զարգացման նպատակները

Ինչպես գիտենք, գլոբալ խնդիրները պահանջում են գլոբալ լուծումներ: 2015 թվականի դեկտեմբերին 196 երկրներ, այդ թվում Հայաստանը ընդունել են կլիմայի փոփոխության վերաբերյալ Փարիզի համաձայնագիրը (հետագայում վավերացրել է միայն 189-ը³): Այն միջազգային պայմանագիր է և սահմանում է մի շարք նպատակներ.

¹ www.uncclearn.org/wp-content/uploads/library/unfccc176_rus.pdf

² www.un.am/hy/p/sustainabledevelopmentgoals

³ www.mnp.am/shrjaka-mijavayr/azgayin-mijazgayin-qaxaqakanutyun

- գլոբալ միջին ջերմաստիճանի բարձրացումը պահել նախաարդյունաբերական մակարդակը գերազանցող 2°C-ից բավականին ցածր և ջանքեր գործադրել՝ սահմանափակելու ջերմաստիճանի բարձրացումը նախաարդյունաբերական մակարդակից 1.5°C-ով՝ գիտակցելով, որ սա զգալիորեն կկրճատի կլիմայի փոփոխության ռիսկերն ու ազդեցությունները,
- բարձրացնել կլիմայի փոփոխության անբարենպաստ ազդեցություններին հարմարվելու կարողությունը և խթանել կլիմայի փոփոխության նկատմամբ դիմացկունությունն ու ջերմոցային գազերի արտանետումների ցածր մակարդակն այնպիսի եղանակով, որ չվտանգվի պարենի արտադրությունը,
- ֆինանսական հոսքերը համապատասխանեցնել ջերմոցային գազերի արտանետումների ցածր մակարդակի ապահովման և կլիմայի փոփոխության նկատմամբ դիմացկունության զարգացման ուղիներին⁴:

Ձեռնարկը մշակվել է «Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի» ծրագրի շրջանակում, որն իրականացնում է ՅՈՒՆԻՍԵֆ-ը՝ Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների հետ համագործակցությամբ:

Ձեռնարկը նախատեսված է ուսուցիչների, մանկավարժների, ինչպես նաև կրթության հարցերով շահագրգիռ անձանց համար: Նպատակն է օգնել ուսուցիչներին, մանկավարժներին՝ կազմակերպելու և իրականացնելու ուսումնական նախագծային աշխատանքներ՝ ստեղծելով հնարավորություն դեռահասների և երիտասարդների համար՝ ներգրավվելու և գործուն մասնակցություն ունենալու կլիմայի փոփոխության նվազեցմանն ուղղված քայլերի և լուծումների կիրառման գործում:

Ձեռնարկում քննարկվում են կլիմայի փոփոխության հիմնահարցի արդիականությունը և այդ համատեքստում կրթության կազմակերպման մանկավարժական մոտեցումներն ու 21-րդ դարի սովորողների հմտությունները: Ներկայացվում են նաև ուսումնական նախագծային աշխատանքի հակիրճ նկարագրությունը, քայլերը և մեկ նմուշօրինակ կլիմայի փոփոխության հիմնահարցի վերաբերյալ:

⁴ www.irttek.am/views/act.aspx?aid=92464

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անցած դարի կեսերից սկսած՝ երկրագնդի վրա տեղի ունեցող բնական և տեխնաժին երևույթների շարքում ամենանշանակալիցը կլիմայի գլոբալ փոփոխությունն է, որի հետագա ընթացքն անկանխատեսելի է ամբողջ կենսոլորտի և մարդկության համար: Ներկայում այդ խնդիրը համարվում է երկրագնդի վրա մարդկային հասարակության գոյատևման հիմնական մարտահրավերներից մեկը:

Այն փաստը, որ մեր մոլորակի կլիման գլոբալ փոփոխությունների է ենթարկվում, այն էլ՝ շատ արագ, այլևս կասկածի տեղիք չի տալիս: Վերջին 130 տարվա ընթացքում երկրագնդի մթնոլորտի ստորին շերտի միջին ջերմաստիճանը բարձրացել է գրեթե 1°C-ով: Ջերմաստիճանի նույնիսկ այսպիսի, թվում է՝ աննշան բարձրացումը մոլորակի մասշտաբով լուրջ վտանգ է նրա «բնակիչների»՝ բույսերի, կենդանիների և մարդկանց համար: Բացի դրանից՝ 1°C-ը միջին համաշխարհային տվյալ է, և որոշ տարածաշրջաններում, ինչպես, օրինակ՝ Արկտիկայում, ջերմաստիճանը շատ ավելի արագ է բարձրանում, իսկ Հայաստանում հասել է 1,3°C-ի: Ինչպես տեսնում ենք, թվերը մտահոգիչ են:

Մարդկանց գործունեությունը, մասնավորապես հանածո վառելիքի օգտագործմանը, անտառահատումներին և անկայուն գյուղատնտեսությանն առնչվող, էապես մեծացնում է մթնոլորտում ջերմոցային գազերի կոնցենտրացիան, ինչն իր հերթին նպաստում է բնության մեջ ջերմոցային էֆեկտի ավելացմանը: Ջերմոցային էֆեկտի ավելացումը հանգեցնում է Երկրի մակերևույթի և մթնոլորտի լրացուցիչ տաքացմանը, որը կարող է բացասաբար ազդել էկոհամակարգերում տեղի ունեցող բնական երևույթների, նյութի ու էներգիայի շրջապտույտի, սննդառության շղթայի, բազմատեսակ փոխհարաբերությունների ամբողջության և մարդու առողջության վրա:

Կլիմայական համակարգը շեղվում է իր հավասարակշռված ռեժիմից, այսինքն՝ կլիմայի փոփոխության հետ ամբողջ եղանակն է շեղվում հավասարակշռությունից. հալչում են սառցադաշտերը և «հավերժական» սառույցը, բարձրանում է Համաշխարհային օվկիանոսի մակարդակը, հաճախակիանում են ջրհեղեղները, երաշտները և փոթորիկները, եղանակն ավելի փոփոխական է դառնում: Կլիմայական փոփոխությունները բերում են նաև նոր պայմաններին չհարմարված շատ բույսերի և կենդանիների ոչնչացմանը, հասցնում զգալի տնտեսական վնաս, վտանգ ներկայացնում մարդկանց առողջության և անգամ կյանքի համար:

Արդյունաբերական հեղափոխությունը, որի սկիզբը ընդունված է համարել 1850-ականները, զուգորդվեց էներգիայի լայնածավալ օգտագործմամբ, որի հիմնական աղբյուրը հանածո վառելիքն է՝ քարածուխը, նավթը, գազը: Վառելիքի այրումից արտանետվում է ածխաթթու գազ, ինչը հիմնական ջերմոցային գազն է, որի կոնցենտրացիան մթնոլորտում արդյունաբերական հեղափոխությունից ի վեր շատ է մեծացել: Զարգացած արդյունաբերական երկրներին է բաժին հասնում ջերմոցային գազերի համաշխարհային արտանետումների 78%-ը, որը խստիվ անդրադառնում է կլիմայի փոփոխությանը, ինչն էլ մեծացնում է Երկիր մոլորակի, մարդկության, մեր և մեր սերունդների ապագայի նկատմամբ անորոշությունն ու մտահոգությունը⁵:

⁵ www.un.org/ru/actnow/facts-and-figures

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Կլիմայի փոփոխություններին, բնապահպանական հիմնախնդիրներին ու մարտահրավերներին դիմակայելու գործում առանցքային և առաջնային է կրթության դերը: Սա ենթադրում է ռազմավարական նոր ուղղվածությունների և կողմնորոշումների նախագծում կրթության ոլորտում, կրթության բովանդակության և կազմակերպման ձևերի դինամիկ զարգացում, այն է՝ բնապահպանական հիմնախնդիրների լուծման ուղիների ու ճանապարհների որոնման, բնական և տեխնածին աղետների կանխարգելման ու ռիսկերի նվազեցման հաղթահարմանն ուղղված կրթության կազմակերպում կրթության բոլոր աստիճաններում ու ձևերում՝ սկսած վաղ տարիքից: Դա կնպաստի սովորողների, համայնքների, հասարակությունների շրջանում բնապահպանական մշակույթի ձևավորմանը:

Բնապահպանական (էկոլոգիական) կրթության և դաստիարակության, բնապահպանական մշակույթի ձևավորման գործընթացում, կարծում ենք, խիստ օգտակար և նպատակային կարող են լինել ուսումնական նախագծային աշխատանքները, նոր սերնդի՝ կլիմայի փոփոխության կրթության (ԿՓԿ) գործում նախագծային աշխատանքների խրախուսումն ու կիրառումը:

Բերենք ԿՓԿ գործընթացում հօգուտ ուսումնական նախագծային աշխատանքների կազմակերպման մի քանի հիմնավորումներ:

Կլիմայի փոփոխություններին և բնապահպանական հիմնախնդիրներին նվիրված ներկայացվող ձեռնարկի շրջանակում ուսումնական նախագծային աշխատանքները կարող են օգտակար լինել և նպաստել ամենից առաջ Հանրակրթության պետական նոր չափորոշիչով ձևակերպված և առաջ քաշված մի շարք առանցքային մոտեցումների ու գաղափարների իրականացմանը:

Հանրակրթության պետական նոր չափորոշիչի շրջանակում կարողունակությունների վրա հիմնված կրթության ապահովում

Ինչպես գիտենք, Հանրակրթության պետական նոր չափորոշիչն առաջնորդվում է կարողունակությունների վրա հիմնված կրթության գաղափարով: Այն սահմանում է միջնակարգ կրթության կարողունակությունները և ձևակերպում ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները յուրաքանչյուր կրթական աստիճանի համար:

Կարողունակությունները սովորողի՝ ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերած գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետորեն ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Դրանք

ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի՝ ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից⁶:



Լեզվական գրագիտություն և կարողունակություն

Սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքն է, որի վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչելու, ըմբռնելու, արտահայտելու, ստեղծելու և մեկնաբանելու տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր:

⁶ www.arlis.am/documentview.aspx?docid=149788



Սովորել սովորելու կարողունակություն

Աշակերտներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետորեն սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում, ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Ինքնակազմակերպվում են և ձևավորում ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն, կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ, ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:



Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտելու ինքնաճանաչման: Ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի նկատմամբ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում: Դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու շնորհիվ ընդունակ են ճանաչելու դրանց տարբերությունները:



Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

Սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:



Թվային և մեդիա կարողունակություն

Սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին. պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրանց առնչվող ռիսկերը, ունակ են գնահատելու և վերափոխելու իրենց վարքը թվային աշխարհում՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից: Տիրապետում են մեդիաարտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիագործիքները քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով:



Մշակութային կարողունակություն

Սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար գիտելիքներ: Ձևավորում են սեփական նախասիրությունները ազգային և համաաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Ի վիճակի են զարգացնելու մշակութային ու գեղագիտական սեփական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ:



Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն

Սովորողներն առօրյայում օգտագործում են մաթեմատիկական մտածողություն՝ բնության, հասարակության, մշակույթի և աշխատանքային ոլորտի երևույթները ճանաչելու և դրանք մաթեմատիկական կառուցվածքների, բանաձևերի, մոդելների, կորերի, աղյուսակների միջոցով հասկանալու համար: Կարողանում են ընկալել և արդյունավետորեն կիրառել վերացարկված և ընդհանրացված հասկացությունները և ճանաչել իրականության մեջ դրանց արտացոլումները: Ընկալում են բնագիտական մտածողության և աշխատանքի, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի միջև եղած փոխադարձ կապը, տեխնոլոգիական գիտելիքի կիրառման հնարավորությունները մարդու պահանջմունքների համատեքստում, ճանաչում են մարդու գործունեության ընթացքում ի հայտ եկող փոփոխություններն ու սեփական պատասխանատվությունը:



Տնտեսական կարողունակություն

Աշակերտները համարժեք վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և պետության դերը տնտեսության մեջ, ինչպես նաև այդ գործընթացներում ճանաչում, գնահատում և արժևորում են կնոջ և տղամարդու դերը: Հասկանում են հասարակության, տնտեսության և քաղաքականության միջև փոխազդեցությունները: Ընկալում են տնտեսական և հասարակական կարգերն ու ճանաչում են բնության և հասարակության փոխազդեցությունները, ինչպես նաև կայուն զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական դերն ու պատասխանատվությունը⁷:

Ինչպես տեսնում ենք, ներկայացված են սովորողների կրթության և դաստիարակության համար խիստ կարևոր և բազմազան կարողունակություններ, որոնք տրամաբանական կապի և հարաբերակցության մեջ են միմյանց հետ: Ուսումնական նախագծային աշխատանքը կարող է լինել վերոնշյալ կարողունակությունների ձևավորման, դրսևորման ու դրանց գնահատման ընդհանրական մեթոդ:

Ինչպես գիտենք, ուսուցման նախագծային մեթոդը ենթադրում է ուսումնական գործընթացի այնպիսի մոդելավորում, երբ սովորողները որոշակի տևական ժամանակահատվածում աշխատում են մարդկանց, հասարակությանը հուզող կենսական կարևոր հիմնախնդիրների շուրջ, ձեռնամուխ լինում իրական, արդիական հիմնահարցերի ուսումնասիրության գործին:

Աշակերտները սովորում են հետազոտություններ կատարել. աշխատել մեդիաաղբյուրների, տեքստային, թվային և գրաֆիկական տեղեկույթի հետ, կողմնորոշվել տեղեկատվության «ծովում», հավաքել, վերլուծել և գնահատել հիմնահարցին առնչվող տարաբնույթ տեղեկություններ, կազմակերպում են հարցազրույցներ, հանդիպումներ խնդրով շահագրգիռ տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ:

Ուսումնական նախագծային մեթոդը ստեղծում է ուսումնական այնպիսի միջավայր, որտեղ խրախուսվում և խթանվում են խմբային աշխատանքը և համագործակցությունը: Հիմնահարցի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելիս սովորողները բաժանվում են խմբերի: Ընդհանուր նպատակին հասնելու համար խմբի անդամները համագործակցում են միմյանց հետ, փոխանակում և վերլուծում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում են քայլեր, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց, կրում անհատական պատասխանատվություն ուսուցման արդյունքների

⁷ Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021 թ., arlis.am

համար: Նրանց մեջ ձևավորվում են հանդուրժողականություն և փոխադարձ վստահություն, համատեղ աշխատանքի ընթացքում սկսում են ավելի լավ ճանաչել իրենց և իրենց ընկերներին և հետևաբար հարգել ու ընդունել իրենց ընկերներին, նրանց հնարավորությունները: Ուսումնական նախագծային աշխատանքների շրջանակներում համագործակցում են նաև իրենց ավագ ընկերների, մեծահասակների հետ: Համատեղ արդյունք գրանցելու համար մեկտեղվում են բոլորի ջանքերը, միավորվում են թե՛ սովորողները, թե՛ մանկավարժները, թե՛ ծնողներն ու համայնքի տարբեր ներկայացուցիչներ: Եվ, ինչը շատ կարևոր է, աշխատանքի ավարտին սովորողներն ունենում են իրական, շոշափելի արդյունքներ:

Այսպիսով՝ ուսումնական նախագծային աշխատանքն ապահովում է հավակնոտ հիմնահարցերի՝ որոշակի տևական ժամանակահատվածում բազմակողմանի և բազմատեսակ, համալիր և համապարփակ հետազոտություն, գործնական բնույթի աշխատանք: Սա էլ նպաստում է սովորողների՝ ուսումնական նյութի, բովանդակության առավել խոր յուրացմանը, համապատասխան իրավիճակներին արդյունավետորեն ու պատշաճ արձագանքելու կարողությունների և հմտությունների զարգացմանը, ժամանակակից կյանքի մարտահրավերներին դիմակայելուն ուղղված արժեհամակարգի ձևավորմանը:



I 21-րդ դարի սովորողների հմտությունների ձևավորում

Հարկ է նշել, որ վերը նշված միջնակարգ կրթության կարողունակությունները մշակվել են՝ հիմքում ունենալով 21-րդ դարի սովորողների հմտությունները⁸: Հետևաբար ուսումնական նախագծային աշխատանքների կազմակերպումն ու խրախուսումը նպաստում են նաև 21-րդ դարի սովորողների հմտությունների ձևավորմանը:

⁸ Lai, R. E. and Viering, M., «Assessing 21st Century Skills: Integrating Research Findings», National Council on Measurement in Education, Pearson, Vancouver, 2012.

21-րդ դարի սովորողների հմտությունները ներկայացված են երեք խոշոր խմբերով.

- **ուսումնառության հմտություններ՝** քննադատական մտածողություն, ստեղծարարություն, համագործակցություն, հաղորդակցություն,
- **գրագիտության հմտություններ՝** մեդիագրագիտություն, տեղեկատվական գրագիտություն, տեխնոլոգիական գրագիտություն,
- **կյանքի հմտություններ՝** ճկունություն, առաջնորդություն, նախաձեռնողականություն, արդյունավետություն, սոցիալական հմտություններ:

Խումբ 1. Ուսումնառության հմտություններ

Հմտությունների այս խումբը համընդհանուր անհրաժեշտություն է աշխատանքային ցանկացած գործունեության համար:



Քննադատական մտածողություն

Քննադատական մտածողությունը հնարավորություն է տալիս քննելու և գտնելու կենսական կարևոր խնդիրների լուծումները: Դա այն մեխանիզմն է, որն օգնում է սովորողներին ինքնուրույն կողմնորոշվելու, վերացնելու խնդիրները և դրանք փոխարինելու օգտակար նախաձեռնություններով:



Ստեղծարարություն

Ստեղծարարությունը կադապարներից դուրս, ազատ և անկաշկանդ մտածելու, երևակայելու ունակությունն է: Այս հմտությունը սովորողներին օգնում է իրերը դիտելու այլ լույսի ներքո, ինչը հանգեցնում է նորարարության: Իսկ նորարարությունը ցանկացած ասպարեզում հարմարվողականության և ընդհանուր հաջողության գրավականն է:



Համագործակցություն

Համագործակցությունը ուրիշների հետ համատեղ աշխատելու ունակությունն է: Այն ենթադրում է, որ սովորողները պետք է աշխատեն միասին, հասնեն փոխզիջման և խնդրի լուծումից ստանան հնարավորինս լավագույն արդյունքը: Համագործակցության կարևորագույն բաղադրիչը անձի պատրաստակամությունն է: Բոլոր մասնակիցները ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է պատրաստակամ լինեն հրաժարվելու իրենց որոշ գաղափարներից և ընդունելու այլ գաղափարներ:



Հաղորդակցություն

Հաղորդակցությունն անձի այն հատկությունն է, որով նա բնականոն փոխհարաբերություններ է հաստատում ուրիշների հետ, համարժեքորեն ձևակերպում իր ասելիքը, տեղեկություններ հաղորդում և ընդունում՝ ճշտորեն վերծանելով դրանք, ապահովելով պատշաճ հետադարձ կապը:

Խումբ 2. Գրագիտության հմտություններ

Հմտությունների այս խումբն անվանում են նաև ՏՀՏ հմտություններ: Դրանցից յուրաքանչյուրը ենթադրում է թվային բնագավառին տիրապետելու որոշակի աստիճան, ինչպես նաև արժանահավատ աղբյուրների և փաստերի կիրառում:



Տեղեկատվական գրագիտություն

Տեղեկատվական գրագիտությունը փաստերին, թվերին, վիճակագրությանը և տվյալներին տիրապետելու սովորողի կարողությունն է: Պարբերական ապատեղեկատվության այս դարաշրջանում առցանց տիրույթում ճիշտ տեղեկություններ գտնելն ինքնին մասնագիտություն է: Չափազանց կարևոր է, որ սովորողները կարողանան ինքնուրույն պարզել և տարբերակել ճիշտ և սխալ տեղեկությունները:



Մեդիագրագիտություն

Մեդիագրագիտությունը սովորողի՝ հավաստի և ոչ հավաստի աղբյուրները պարզելու կարողությունն է: Այն հնարավորություն է տալիս հասկանալու տեղեկատվության հրապարակման մեթոդները և միջոցները: Ինչպես և նախորդ հմտության պարագայում, մեդիագրագիտությունը ևս օգնում է պարզելու ճշմարտությունը մի աշխարհում, որը հագեցած է տարաբնույթ տեղեկություններով:



Տեխնոլոգիական գրագիտություն

Տեխնոլոգիական գրագիտությունը սովորեցնում է օգտվել տեղեկատվական դարաշրջանի սարքավորումներից: Այն թույլ է տալիս հասկանալ և կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներն ու սարքավորումները: Որպես արդյունք՝ սովորողները կարողանում են ավելի լավ հարմարվել 21-րդ դարի տեղեկատվական աշխարհին և կարևոր դերակատարություն ունենալ կենսական կարևոր խնդիրների լուծման գործում:

Խումբ 3. Կյանքի հմտություններ

Հմտությունների այս խումբը վերաբերում է մարդու անձնական կյանքին, սակայն դրանք դրսևորվում են նաև մասնագիտական միջավայրում:



Ճկունություն

Ճկունությունն անձի՝ անհրաժեշտության դեպքում նախապես մշակված ծրագրերից շեղվելու, փոփոխվող իրավիճակներին արագ հարմարվելու և համարժեք արձագանքելու ունակությունն է: Սա ամենադժվար ձևավորվող որակներից է և հիմնված է անձի համար «ոչ ցանկալի» երկու գաղափարների վրա: Առաջին՝ ձեր բռնած ուղին միշտ չէ, որ լավագույնն է, և երկրորդ՝ դուք պետք է գիտակցեք և ընդունեք, եթե սխալ եք: Ճկունությունը պահանջում է ընդունել, որ միշտ, անգամ եթե ժամանակի ընթացքում փորձ եք ձեռք բերել, սովորելու շատ բան եք ունենալու:

Ճկունությունը կարևոր նշանակություն ունի սովորողի հաջող կարիերայի, մասնագիտական աճի և զարգացման տեսանկյունից: Իմանալ երբ և ինչպես փոխվել և ինչպես արձագանքել փոփոխություններին, հմտություն է, որն օգտակար է լինելու տվյալ անձին ամբողջ կյանքի ընթացքում:



Առաջնորդություն

Առաջնորդությունը անձի՝ նպատակներ սահմանելու և համագործակցելու միջոցով դրանց հասնելու ունակությունն է: Այն թիմին շահագրգռելու և ոգևորելու, քայլ առ քայլ դեպի նպատակն առաջնորդելու, թիմային աշխատանքներն արդյունավետորեն կազմակերպելու ունակություն է:

Առաջնորդությունը հմտություն է, որն անհրաժեշտ է անգամ սկսնակ աշխատողներին և օգնում է հասկանալու այն որոշումները, որ կայացնում են ղեկավարները: Այդուհանդերձ, մասնագիտական զարգացման և առաջընթացի համար միայն առաջնորդությունը բավարար չէ:



Նախաձեռնողականություն

Իրական հաջողության հասնելու համար պահանջվում է նաև նախաձեռնողականություն, որը անձի՝ ծրագրեր, ռազմավարություն ինքնուրույն նախաձեռնելու ունակությունն է: Դա սովորելու և կիրառելու առումով բավականին բարդ հմտություն է, քանի որ հաճախ ենթադրում է լրացուցիչ աշխատանք, ջանքեր ու ժամանակ, միևնույն ժամանակ հատկություն է, որն օգուտներ է բերում: Այն հատկապես դրսևորվում է անձի բնավորության մեջ՝ աշխատանքային էթիկայի և մասնագիտական առաջընթացի առումով:



Արդյունավետություն

Արդյունավետությունը սովորողի՝ աշխատանքը համապատասխան ժամանակահատվածում ավարտելու կարողությունն է: Ցանկացած մասնագետի համար կարևոր է անել ավելին հնարավորինս կարճ ժամանակահատվածում:

Ցանկացած մակարդակում արդյունավետության ռազմավարությունները պատկերացնելու համար սովորողները գտնում են այն միջոցները, որոնք իրենց ավելի լավ է հաջողվում՝ գնահատելով սեփական կարողությունները:



Սոցիալական հմտություններ

Սա մեր կողմից ներկայացվող վերջին հմտությունն է, որը կապակցում է 21-րդ դարի բոլոր հմտությունները: Սոցիալական հմտությունները խիստ կարևոր նշանակություն ունեն անձի մասնագիտական շարունակական աճի ու զարգացման համար: Այն փոխադարձ օգտակարության համար ուրիշների հետ շփվելու և փոխհամագործակցելու ունակությունն է: Մարդիկ իրենց գործունեության ոլորտում հաջողություններ են գրանցում շնորհիվ այն կապերի, որ ստեղծում են իրենց շրջապատող մարդկանց հետ:

Այս համատեքստում ամբողջ աշխարհում կարևորվում է բարեկիրթ վարվեցողության, քաղաքավարության, առօրյա զրույցներ վարելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված կրթության կազմակերպումը սովորողների շրջանում:

Միջառարկայական կապերի ձևավորում և խորացում կենսական հիմնահարցերի շուրջ

Հանրակրթության պետական նոր չափորոշիչը կարևորում է նաև միջառարկայական կապերի ձևավորումը և ձևակերպում է ուսումնական առարկաների խաչվող հասկացությունները: Ըստ բովանդակության՝ ուսումնական նախագծային աշխատանքները կարող են իրականացվել կոնկրետ մեկ առարկայի շրջանակում, ինչպես նաև մի քանի առարկաների ինտեգրմամբ: Դրանք կարող են լինել նաև վերառարկայական՝ ուղղված սովորողների հմտությունների և կարողությունների զարգացմանը (այսպես կոչվող՝ ընդհանրական, փոխանցելի, առանցքային կարողություններ և հմտություններ):

Եվ քանի որ բնապահպանական, կլիմայի փոփոխությանն առնչվող խնդիրները կենսական նշանակություն ունեցող հիմնահարցեր են, որոնց արդյունավետ լուծումից կախված է մարդկության զարգացման ընթացքը, դրանք ուսումնասիրվում և քննարկվում են ուսումնական տարբեր առարկաների շրջանակներում: Այս տեսակետից ևս ուսումնական նախագծային աշխատանքը հրաշալի տարբերակ է, «ուսուցման գործիք» կլիմայի փոփոխության վերաբերյալ երևույթներն ու գաղափարները, ուսումնական բովանդակությունը տարբեր տեսանկյուններից և ուսումնական տարբեր գործողությունների միջոցով խոր, բազմաշերտ և համապարփակ ուսումնասիրելու և յուրացնելու համար: Սովորողը հնարավորություն է ստանում ուսումնասիրվող երևույթին, հիմնահարցին անդրադառնալու մի քանի անգամ, սակայն ամեն անգամ՝ նոր կողմից, նոր ասպեկտով, ավելին՝ իրականացնելով ուսումնական տարբեր գործողություններ:

Ուսումնական նախագծային աշխատանքների կազմակերպման խրախուսում

Հանրակրթության պետական նոր չափորոշիչը խրախուսում է կրթության տարբեր աստիճաններում ուսումնական նախագծային աշխատանքների կազմակերպումը: Ավելին՝ Հանրակրթության պետական նոր չափորոշիչով 7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր աշակերտ տարեկան պետք է իրականացնի առնվազն մեկ ուսումնական նախագիծ իր ընտրած առարկայից կամ առարկայախմբից⁹: Այս առումով ևս կլիմայի փոփոխության և բնապահպանական հիմնախնդիրներին նվիրված ուսումնական նախագծերը կարող են օգտակար լինել և սովորողների, և ուսուցիչների համար:

Մասնակցային կրթության ապահովում

Անմիջականորեն առնչվելով իրական կյանքին և շոշափելով արդիական, խնդրահարույց թեմաներ՝ նախագծային աշխատանքները նաև խիստ գրավիչ են ու հետաքրքիր սովորողների համար: Դա առավել լայն հնարավորություններ է ընձեռում բոլոր սովորողների՝ այդ աշխատանքներին ակտիվ մասնակցության ու ներառման՝ նրանց կրթական կարիքներին, հետաքրքրություններին և հնարավորություններին համապատասխան:

Ուսումնական նախագծային աշխատանքները ներառական կրթություն իրականացնելու հիանալի միջոց են, քանի որ նախագծային ուսուցման պրակտիկայի յուրաքանչյուր տարր ուղղված է ուսումնառության առավել ներգրավող և դինամիկ միջավայրի ստեղծմանը բոլոր աշակերտների համար՝ բացառելով ցանկացած խտրականություն՝ հաշմանդամության փաստով, սոցիալական կարգավիճակով, սեռով, էթնիկական, կրոնական, լեզվական պատկանելությամբ և այլ առանձնահատկություններով ու տարբերություններով պայմանավորված:

Հետևաբար կարևոր է օգտվել ուսումնառությունը խթանող և աջակցող՝ Ուսումնառության համընդհանուր ձևավորման (ՈՒՀՁ) սկզբունքներից ու դրանց համապատասխան ուղենիշներից: Յուրաքանչյուր սկզբունք կարելի է կիրառել բազմազան միջոցներով ու եղանակներով, որոնք պայմանավորված են առկա ռեսուրսներով, ուսուցման միջավայրով, սովորողների կարիքներով և ուսուցչի ստեղծարարությամբ:

Տես «Ուսումնառության համընդհանուր ձևավորման (ՈՒՀՁ) սկզբունքները» հավելվածը:

⁹ www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Սովորողների բնապահպանական վարքագծի և մշակույթի ձևավորում

Հայտնի է, որ պատկերացումները, գիտելիքներն ու գաղափարները ավելի արագ և հեշտությամբ են ձևավորվում, քան դրանց գործնական կիրառությունը և մարդու վարքագիծը: Սովորողները հաճախ շատ գեղեցիկ ու դիպուկ մտքեր են արտահայտում, խելացի դատողություններ անում «լավի» և «վատի», «ճշմարտության ու կեղծիքի», «ընդունելիի և անընդունելիի» մասին, բերում հիմնավոր փաստարկներ, համարժեք գնահատում իրողությունները, սակայն երբ հարկավոր է լինում դրանք կիրառել և ցուցադրել որոշակի օրինակով, իրենց վարքով, հաճախ դժվարանում են: Այստեղ բախվում ենք շատ լուրջ խնդրի՝ այսպես կոչված «գիտելիքի թրանսվերի», գիտելիքը կյանք փոխադրելու, փոխանցելու խնդրին: Կարծում ենք, որ սա կրթության կարևոր հիմնահարցերից է: Եվ պատահական չէ, որ այսօր առաջ է քաշվում և հետևողականորեն խրախուսվում սովորողների և նաև մանկավարժների՝ 21-րդ դարի հմտությունների ձևավորման գաղափարը:

Բնապահպանական մշակույթի և վարքագծի ձևավորման լավագույն տարբերակը գործելու, անելու միջոցով սովորելն է: Այս նպատակով տարբեր ուսումնական առարկաների շրջանակներում կարելի է կազմակերպել կլիմայի փոփոխության և բնապահպանական թեմաներով ինտերակտիվ դասեր և պարապմունքներ, քննարկումներ ու բանավեճեր: Սակայն կարծում ենք, որ խնդրի լուծման արդյունավետ տարբերակներից մեկը նշված թեմաներով ուսումնական նախագծային աշխատանքների կազմակերպումն է դպրոցում, համայնքում, դրանց իրականացման խրախուսումն է՝ հաշվի առնելով նախագծային աշխատանքի առանձնահատկություններն ու հնարավորությունները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՔԱՅԼԵՐԸ

Ուսումնական նախագծային աշխատանքն ունի իրականացման քայլերի որոշակի տրամաբանություն.

**Նախագծի թեմայի
ընտրություն**

**Հիմնահարցի
ձևակերպում**

**Աշխատանքային խմբերի ձևավորում.
հիմնախնդրի հիմնավորում**

**Հետազոտական հարցերի առաջադրում
և աշխատանքի բաշխում**

**Խմբերի ինքնուրույն աշխատանք,
հետազոտություններ**

**Ստացված արդյունքների
միջանկյալ քննարկումներ**

**Կատարված աշխատանքի
արդյունքների ներկայացում**

**Անհատների և ամբողջ խմբի աշխատանքի
արդյունքների գնահատում**

**Գործողությունների
ծրագրի առաջարկ¹⁰**

Ուսումնական նախագծային աշխատանքի առավել տեսանելի և գործնական դիտարկման նպատակով ներկայացնենք կլիմայի փոփոխության թեմային առնչվող նախագծային աշխատանքի նմուշօրինակ:

¹⁰ Պետրոսյան Ս., Խաչատրյան Հ., Մարդու թրաֆիքինգ և շահագործում, ուսումնաստանողական ձեռնարկ դասախոսների և ուսանողների համար, Երևան, 2013, էջ 81:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ



Քայլ

Նախագծի թեմայի ընտրություն

Թեմա

Կլիմայի փոփոխություն

Դասարան

9-րդ

Թեմային առնչվող ուսումնական առարկաներ

«Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Հասարակագիտություն»

Ուսումնական նախագծային աշխատանքի նպատակը

Ձևավորել և զարգացնել սովորողների՝ 21-րդ դարի հմտությունները, նպաստել 9-րդ դասարանի «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Հասարակագիտություն» առարկաների չափորոշիչներում սահմանված հետևյալ թեմաների ակնկալվող վերջնարդյունքների ձևավորմանը:

Ուսումնական նախագծային աշխատանքի տևողությունը

4-8 շաբաթ

Ուսումնական առարկաներ

«Աշխարհագրություն»

Թեմաներ՝ ՀՀ տնտեսությունը, ՀՀ բնությունը

- Բնութագրել ՀՀ կլիմայական առանձնահատկություններն ու դրանց ազդեցությունը տնտեսության վրա:
- Վերլուծել տարածաշրջանում, պետությունում մարդու տնտեսական գործունեության ազդեցության մասշտաբները շրջակա միջավայրի վրա:

«Կենսաբանություն»

Թեմա՝ Բնության պահպանություն

- Ձևավորել պատկերացումներ կենսաբանական ռեսուրսների, կենսաբազմազանության արժեքի, կենսաբազմազանության վրա ազդող գործոնների վերաբերյալ:
- Զարգացնել կենսաբազմազանության վրա մարդու գործունեության վնասակար հետևանքները գնահատելու, կանխելու և վերացնելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ:
- Նպաստել բնապահպանական հիմնախնդիրները գիտակցող, պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

«Հասարակագիտություն»

Թեմա՝ Պետություն

- Բացատրել պետության նշանակությունը, ինչպես նաև գնահատել քաղաքացի-պետություն փոխհարաբերությունը:
- Բացատրել հանրային (պետական) իշխանության էությունը, դրա անհրաժեշտությունը և աղբյուրները:

Առաջարկում ենք ուսումնական նախագծային աշխատանքն իրականացնել վերոնշյալ ուսումնական առարկաների թեմաներն ուսումնասիրելուց հետո:

Ուսումնական նախագծային աշխատանքը սկսվում է սովորողների հետ կլիմայի փոփոխության կարևորության և արդիականության վերաբերյալ քննարկման կազմակերպմամբ:

Թեմայի առնչությամբ առաջարկում ենք ուսումնասիրել.

- ԱԲԳ Կլիմայի փոփոխության ուսումնական ձեռնարկ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, Երևան, 2013, 49 էջ:
- Կլիմայական արկղիկ, ուսումնական ձեռնարկ, Երևան, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, 2020, 344 էջ:

Խոսվում է այն մասին, որ մենք այսօր ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ մարդու տնտեսական գործունեության բացասական հետևանքները բերում են կլիմայի գլոբալ փոփոխության, ինչն էլ բացասաբար է ազդում բնական էկոհամակարգերի և նրանց փոխազդեցությունների, մարդու առողջության և կենսակերպի վրա:

Մեր միջավայրում, համայնքի ներսում եղել են, կան և կարող են լինել բնապահպանական և կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած այնպիսի հիմնախնդիրներ, մարտահրավերներ, որոնց մենք՝ որպես մեր երկրի պատասխանատու քաղաքացիներ, ոչ միայն պետք է տեղեկացված լինենք, այլև պետք է մասնակցենք և օժանդակենք դրանց լուծման գործընթացին:

Հաճախ մենք կարծում ենք, որ միայն իշխանություններն են պատասխանատու այս կամ այն հիմնախնդրի լուծման համար, և չենք կարևորում յուրաքանչյուրիս մասնակցությունն այդ գործընթացում:


Հուսանք, որ առաջարկվող ուսումնական նախագծային աշխատանքը կօգնի սովորողներին առավել խոր և բազմակողմանի յուրացնելու ԿՓ ուսումնական նյութերը, մասնակցելու (ներգրավվելու) համայնքներում առկա հիմնախնդիրների բարձրացմանը, 21-րդ դարի հմտությունների զարգացմանը:



Հիմնախնդրի ընտրություն



Քանի որ մենք արդեն ունենք նախագծի թեման՝ «Կլիմայի փոփոխություն», անհրաժեշտ է սովորողների մասնակցությամբ ընտրել թեմային առնչվող հիմնախնդիրը:

 **Առաջարկում ենք սովորողների հետ իրականացնել մտազրոհ՝ երաշխավորելով բոլորի մասնակցությունն ու հնչած մտքերի հնարավորինս ամբողջական, համադրված ներկայացումը հետևյալ հարցի շուրջ:**

Մարդու տնտեսական գործունեության հետևանքով մեր համայնքում, մարզում, երկրում ինչ խնդիրներ կարող ենք բարձրաձայնել, որոնք անմիջականորեն կարող են ազդել կլիմայի փոփոխության վրա:

Սովորողների պատասխանները գրանցվում են (գրատախտակին, ֆլիպչարտին, էկրանին): Քննարկման ընթացքում հիմնախնդիրները հստակեցվում են և համալրվում:

Օրինակ

- Աղբի տեսակավորման մշակույթի բացակայությունը մեր համայնքում:
- Աղբահանության կազմակերպման դժվարությունները:
- Թափոնների վերամշակման նոր տեխնոլոգիաների և կազմակերպությունների պակասը մեր երկրում:
- Աղբի այրման բացասական հետևանքները և դրանց մասին տեղեկատվության պակասը մեր համայնքում:
- Երկրի վրա ջերմոցային գազերի ազդեցությունը:
- Հանքային վառելիքի այրման բացասական հետևանքները:
- Անտառահատման վնասակար հետևանքները:
- Պարարտանյութերի և թունաքիմիկատների սխալ պահպանումը, օգտագործումը և չարաշահումը գյուղատնտեսության մեջ:
- Հանքային վառելիքի այրման հետևանքները:
- Հանքարդյունաբերության արտանետումների վնասակար ազդեցությունները:
- Մեքենաների արտանետած ջերմոցային գազերի վնասակար ազդեցությունները:
- Կենցաղային սարքավորումների արտանետած ջերմոցային գազերի վնասակար ազդեցությունները:
- Համացանցի ածխածնային հետքը և դրա ազդեցությունը կլիմայի փոփոխության վրա:
- Տրանսպորտը որպես համաշխարհային վնասակար արտանետումների մեծ աղբյուր:
- Արհեստական ոռոգման չարաշահումը որպես հողի աղակալման ու անապատացման պատճառ:
- Պարենային պահանջարկի մեծացման ազդեցությունը կլիմայի փոփոխության վրա:
- Խոշոր քաղաքները որպես «ջերմային կղզիներ»:
- Փակ տարածքներում օդի աղտոտվածության ազդեցությունը:



Դասարանը բաժանվում է զույգերի, հանձնարարվում է վերը թվարկված հիմնախնդիրներից ընտրել որևէ մեկը: Այնուհետև կազմակերպվում է քվեարկությունը: Դասարանը քվեարկությամբ ըստ ձայների մեծամասնության ընտրում է մեկ հիմնախնդիր:

Քվեարկությունն առաջարկում ենք կազմակերպել հետևյալ կերպ: Սովորողը մոտենում է գրատախտակին (ֆլիպչարտին կամ էկրանին) և նշում ցանկից իր նախընտրած հիմնախնդիրը: Ընդ որում՝ նա պետք է ընտրի մյուս զույգերի առաջարկած հիմնախնդիրներից մեկը: Ընտրության ընթացքը պետք է իրականացնել առանց միմյանց հետ քննարկելու:

Հնարավոր է, որ քվեարկության արդյունքում հավասար ձայներ հավաքեն մեկից ավելի հիմնախնդիրներ: Այս պարագայում քվեարկության գործընթացը կրկնվում է: Սակայն եթե նորից նույն արդյունքն ենք ստանում, ապա նախապատվությունը տրվում է այն հիմնախնդրին, որը սովորողների կարծիքով առավել հրատապ է և առաջնահերթ:

Այսպես, օրինակ՝ սովորողներն արդեն ընտրության արդյունքում ունեն մեկ հիմնախնդիր՝ «Անտառահատման վնասակար հետևանքները», նշանակում է՝ նախագծային հետազոտական աշխատանքի առաջին քայլն արդեն արված է:

Այս քայլն առավելապես նպաստում է 21-րդ դարի հեղուկայլ հմտությունների ձևավորմանը.



Հաղորդակցություն



Քննադատական մտածողություն



Ճկունություն



Աշխատանքային խմբերի ձևավորում



Հիմնախնդրի կարևորությունը համայնքի կամ հանրության համար հիմնավորելու նպատակով դասարանում ձևավորվում են աշխատանքային երեք խմբեր:

- Յուրաքանչյուր խմբի տրվում է հստակ առաջադրանք:
- Համատեղ քննարկվում և մշակվում է խմբերի աշխատանքների գնահատման ձևը (նմուշօրինակում նախատեսված է գնահատման սանդղակ):
- Խմբերը պատասխանատու են իրենց առաջադրանքի կատարման համար:

Քննարկումից հետո ուսուցիչը հետևում է, որ՝

- խմբերում ընդգրկվեն տարբեր հնարավորություններ և կրթական կարիքներ ունեցող սովորողներ,
- ապահովվեն բոլոր սովորողների հավասար ներգրավվածությունն ու լիարժեք և արդյունավետ մասնակցությունն իրենց կրթական կարիքներին ու հնարավորություններին համապատասխան՝ բացառելով ազգային, կրոնական, գենդերային, լեզվական, սոցիալ-տնտեսական, հաշմանդամության, օժտվածության և այլ փաստեր,
- հնարավորինս պահպանվի տղաների և աղջիկների համամասնությունը,
- հանձնարարությունները զերծ լինեն կարծրատիպային մոտեցումներից ու հավասարապես վերաբերեն բոլոր աշակերտներին:

Խումբ առաջին



Առաջին խմբին հանձնարարվում է ուսումնասիրել մեդիաաղբյուրներ, մեդիագրականություն (լրատվամիջոցներ, համացանց, դասագիրք, ուսումնական նյութեր, ուսումնաօժանդակ գրականություն և այլն), մուլտիմեդիոն նյութեր (տեսանյութեր, ձայնագրություններ, նկարներ, ատլասներ, գրաֆիկներ, դիագրամներ, պատկերներ, անիմացիաներ, վիճակագրական տվյալներ, սոցիարցումներ և այլն) և դուրս բերել հիմնախնդրին առնչվող տեղեկությունները:

Սովորողները կարող են օգտվել հիմնախնդրի վերաբերյալ, օրինակ, հետևյալ աղբյուրներից.

- «Կենսաբանություն», 9-րդ դասարան (դասագիրք)
- «Աշխարհագրություն», 9-րդ դասարան (դասագիրք)
- «Հասարակագիտություն», 9-րդ դասարան (դասագիրք)
- Կլիմայական արկղիկ. ուսումնական ձեռնարկ, http://nature-ic.am/hy/publication/Climate-Box-educational-manual/12724?fbclid=IwAR01Y3SLm_fyfSFrSh9yer8bH3izBrdgpRA1PBI-WLc-AIQbD-hxn-GuvqY
- ԱԲԳ Կլիմայի փոփոխության ուսումնական ձեռնարկ, www.nature-ic.am/hy/publication/ABC-Education-Book-on-Climate-Change/10496
- Կլիմայի փոփոխության մարտահրավերների հաղթահարման կրծքանշան, www.fao.org/3/i5216hy/I5216HY.pdf
- Անտառներ. մարտահրավերների հաղթահարման կրծքանշան, www.fao.org/3/i3479hy/i3479hy.pdf
- Կլիմայի փոփոխություն և անտառի տրանսֆորմացիա Հարավային Կովկասում, https://wwfeu.awsassets.panda.org/downloads/manual_1.pdf

- Կլիմայի փոփոխություն և անտառի տրանսֆորմացիա Հարավային Կովկասում. ուսուցողական ձեռնարկ. մեկօրանոց մոդուլ անտառի մասնագետների և ղեկավար մարմինների համար, https://d2ouvy59p0dg6k.cloudfront.net/downloads/trainingmanual_armenia_arm_2014_1.pdf
- Անտառագիտություն, drive.google.com/file/d/1DTrlwUZrIfbMaiJwYio6gGY-GNqaly3E/view
- Դեգրադացված անտառների չափորոշիչների ուղեցույց, drive.google.com/file/d/1vga1PhjLmxZ2b3d100w9yb0-PXYnv6Wh/view
- Համայնքային կայուն զարգացման նորարարական լուծումներ, info@issdngo.com, www.issdngo.com
- Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի, office@awhhe.am, www.awhhe.am/
- Armenian Center for Democratic Education CIVITAS, NGO, www.civitasarmenia.am
- ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի, www.recp.am
- Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի, ՅՈՒՆԻՍԵՖ, www.unicef.org/armenia/
- Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա ՀԿ, www.yba.am
- Կլիմայի փոփոխությունների տեղեկատվական կենտրոն, www.nature-ic.am
- Էկո լուր, www.ecolur.org
- Թռչունների պաշտպանության հայկական ասոցիացիա, www.aspbirds.org
- ArAves բնության պահպանության հասարակական կազմակերպություն, www.araves.org
- «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ, www.armeniatree.org
- «Սևան» ազգային պարկ, www.sevanpark.am
- Հայաստանի բնության պետական թանգարան, www.smn.am
- Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն, www.armmonitoring.am

Ուսումնասիրություններն իրականացնելիս սովորողներն առաջնորդվում են ստորև ներկայացված հարցերով.

- 1 Ո՞րն է ընտրված հիմնախնդրի կարևորությունն արդի աշխարհում:
- 2 Ինչպե՞ս են անտառահատումներն ազդում կլիմայի փոփոխության վրա:
- 3 Ի՞նչ տարածվածություն ունի հիմնախնդիրը մեր երկրում և ձեր համայնքում: Բնակչության զոր խմբերն են առավել վտանգված:
- 4 Ի՞նչ անդառնալի հետևանքներ կարող է թողնել կլիմայի փոփոխությունը էկոհամակարգերում առկա փոխազդեցությունների հավասարակշռվածության վրա:
- 5 Ի՞նչ լուծումներ կան: Դուք ի՞նչ կարող եք անել:

Խումբ երկրորդ



Երկրորդ խմբին հանձնարարվում է, օգտվելով մեդիաաղբյուրներից, ուսումնասիրել հիմնախնդրին առնչվող առկա օրենսդրությունը կամ քաղաքականությունը և այն, թե իշխանության որ օղակներն են զբաղվում այս հիմնախնդրով:

Խմբին առաջարկվում է ուսումնասիրության ընթացքում դուրս բերել հիմնախնդրին առնչվող օրենսդրական հոդվածները, պարբերությունները:

Սովորողները պետք է օգտվեն միայն հավաստի և պաշտոնապես երաշխավորված կայքէջերից՝ նշելով կայքէջերի հղումները և նյութերի աղբյուրները:

Առաջարկվում ենք օգտվել, օրինակ, հետևյալ աղբյուրներից.

- Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջ, www.arlis.am
- ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջ, www.parliament.am
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, www.mnp.am
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, www.mes.am
- Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ, www.arnap.am
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, www.mtad.am

Խումբ երրորդ



Հարցազրույցների վարում: Հարցազրույցների նպատակն է պարզել հիմնախնդրի վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության մակարդակն ու վերաբերմունքը, ինչպես նաև հավաքել օգտակար տեղեկություններ:

Երրորդ խմբին հանձնարարվում է անցկացնել հարցազրույցներ հետևյալ թիրախային խմբերի հետ՝

- համայնքում ապրող քաղաքացիներ (ուսուցիչներ, սովորողներ, ծնողներ, համայնքի բնակիչներ),
- շրջակա միջավայրի կառավարման համակարգի, համայնքի պատասխանատուներ, համայնքի ղեկավար, ավագանի, մասնագետ մանկավարժներ, հասարակական կազմակերպություններ և այլն:

Սովորողները կարող են հարցազրույցներն իրականացնել՝ այցելելով նշված կազմակերպությունների գրասենյակներ, ինչպես նաև հեռախոսազանգի կամ առցանց կապի միջոցով:

Թիրախային երկու խմբերի հետ անցկացված հարցազրույցների քանակը պետք է լինի նվազագույնը 10՝ յուրաքանչյուր խմբի համար: Համայնքում ապրող քաղաքացիների ներկայացրած պատասխաններն ամփոփվելու են առանձին, ոլորտի պատասխանատուներին՝ առանձին:

Սովորողներին անհրաժեշտ է տեղեկացնել, որ նախապես՝ մինչ հարցազրույցը սկսելը, պետք է հարցվողի՝ հարցազրույցին մասնակցելու համաձայնությունը: Եթե հարցազրույցին մասնակցողը չի ցանկանում հրապարակել իր անունը, ապա պետք է նշել միայն նրա դերը համայնքում, օրինակ՝ ուսուցիչ, ծնող, սովորող, համայնքի բնակիչ և այլն:

Պետք է նաև ուշադրություն դարձնել, որ հարցվողների մեջ ընդգրկված լինեն տարբեր սեռերի քաղաքացիներ, համայնքի բնակիչներ, հնարավորինս պահպանվի համամասնությունը:

Ցանկալի է ունենալ հարցազրույցների ձայնագրություններ, նշումներ ու նկարներ՝ դարձյալ տեղեկացնելով սովորողներին, որ այս դեպքում ևս նախապես պետք է ստանալ հարցվողի համաձայնությունը:

Այս քայլն առավելապես նպաստում է 21-րդ դարի սովորողների հետևյալ հմտությունների ձևավորմանը.



Մեդիագրագիտություն



Տեղեկատվական գրագիտություն



Տեխնոլոգիական գրագիտություն



Հաղորդակցություն

**Ձևաթուղթ
Համայնքի բնակիչների համար**

Սովորողի անունը

Դպրոցի անվանումը

Հարցվողի անունը (կամ դերը համայնքում)

Սեռը

Ամսաթիվը

**Ուսումնասիրվող հիմնախնդիրը՝ «Անտառահատման վնասակար հետևանքները»
Հարցազրույցի նպատակը՝ Ուսումնասիրել մեր համայնքում (մարզում, երկրում) անտառահատման ազդեցությունը կլիմայի փոփոխության վրա:**

Կարևորում եք արդյոք մեր կողմից ուսումնասիրվող հիմնախնդիրը: Խնդրում ենք հիմնավորել պատասխանը:

.....
.....
.....
.....
.....

Տեղյակ եք արդյոք, որ անտառահատումն անդրադառնում է կլիմայի փոփոխության վրա:

.....
.....
.....
.....

Կարո՞ղ եք մեզ տրամադրել տեղեկություններ անտառահատման հետևանքով սպառնացող վտանգների վերաբերյալ:

.....
.....
.....
.....

Ձեր կարծիքով ովքեր կամ հր կառույցները կարող են մեզ տեղեկություն տրամադրել այս խնդրի վերաբերյալ:

.....

.....

.....

.....

.....

Անտառահատման հետևանքով ինչ փոփոխություններ եք նկատել մեր համայնքում:

.....

.....

.....

.....

.....

Խնդիրը կանխելուն ուղղված ինչ լուծումներ կարող եք առաջարկել:

.....

.....

.....

.....

.....

Տեսնում եք արդյոք ձեր մասնակցությունը հիմնախնդրի լուծման աշխատանքներին: Եթե այո, ապա ինչպես:

.....

.....

.....

.....

.....

Ձևաթուղթ
Ոլորտի պատասխանատուների համար

Սովորողի անունը

Դպրոցի անվանումը

Հարցվողի անունը (կամ դերը համայնքում)

Սեռը

Ամսաթիվը

Ուսումնասիրվող հիմնախնդիրը՝ **«Անտառահատման վնասակար հետևանքները»**
Հարցազրույցի նպատակը՝ **Ուսումնասիրել մեր համայնքում (մարզում, երկրում) անտառահատման ազդեցությունը կլիմայի փոփոխության վրա:**

Ձեր կարծիքով որքանով է կարևոր այս հիմնախնդիրը: Խնդրում ենք տալ մեկ-երկու հիմնավորում:

.....
.....
.....
.....
.....

Խնդրում ենք մեզ ուղղորդել, թե ինչպես է անտառահատումն անդրադառնում կլիմայի փոփոխության վրա:

.....
.....
.....
.....
.....

Ինչ տարածվածություն ունի այս հիմնախնդիրը մեր համայնքում, մարզում, երկրում:

.....
.....
.....
.....
.....

Հասարակության և առանձին խմբերի (տղամարդիկ, կանայք, երեխաներ, ծերեր և այլն) համար ինչ հետևանքներ կարող է ունենալ այս հիմնախնդիրը:

.....

.....

.....

.....

.....

Ինչպե՞ս կարող են երիտասարդները ներգրավվել այդ լուծումների իրականացման գործում:

.....

.....

.....

.....

.....

Կ՞ան արդյոք անհատներ, խմբեր կամ կազմակերպություններ մեր համայնքում, որոնք հետաքրքրված են հիմնախնդրի լուծմամբ:

.....

.....

.....

.....

.....

Իշխանության ղր օղակներն են պատասխանատու հիմնախնդրի լուծման համար:

.....

.....

.....

.....

.....

Արդյոք գոյություն ունի հիմնախնդրին առնչվող օրենսդրություն կամ քաղաքականություն: Ինչո՞րով ենք հակիրճ ներակայացնել՝ նշելով աղբյուրները:

.....

.....

.....

.....

.....

Ինչո՞րով կանխելուն ուղղված ինչ լուծումներ կարող եք առաջարկել:

.....

.....

.....

.....

.....

Քայլ 4

Խմբերի ինքնուրույն աշխատանք. հեղազոտություն



Հետազոտական աշխատանքը կատարելու համար խմբերին տրվում է 2-4 շաբաթ ժամանակ: Այդ ժամանակահատվածում կազմակերպվում են յուրաքանչյուր խմբի հետ միջանկյալ քննարկումներ՝ առնվազն երեք անգամ:

Այս քայլն առավելապես նպաստում է 21-րդ դարի հեղինակյալ հմտությունների ձևավորմանը.



Արդյունավետություն



Սոցիալական հմտություններ



Առաջնորդություն



Ճկունություն



Համագործակցություն



Նախաձեռնողականություն



Քննադատական մտածողություն



Սրացված արդյունքների միջանկյալ քննարկումներ



«Անտառահատման վնասակար հետևանքները» հիմնախնդրի միջանկյալ քննարկումները նախաձեռնում են խաչվող ուսումնական առարկաների՝ կենսաբանության, աշխարհագրության և հասարակագիտության ուսուցիչները:

Նրանք պարբերաբար կազմակերպում են քննարկումներ, հետևում խմբերին հանձնարարված առաջադրանքների կատարման ընթացքին, անդրադառնում աշխատանքի գնահատման պահանջներին, ինչպես նաև նախանշում հետագա աշխատանքի ուղղությունները:

Անչափ կարևոր է ապահովել և աջակցել, որ խմբերում ներառված բոլոր սովորողներն ունենան իրենց կարողություններին համապատասխան գործառույթներ, հավասար հնարավորություններ և պայմաններ՝ աշխատանքներին մասնակցելու, ընդգրկվելու համար:

Ուսուցիչներն աջակցում և ուղղորդում են աշխատանքային խմբերին՝

- գտնելու փաստական տեղեկատվության արժանահավատ աղբյուրներ,
- տարանջատելու տեղեկատվությունը ապատեղեկատվությունից,
- դրսևորելու հաղորդակցման հմտություններ (վարվեցողություն, քաղաքավարություն, պատշաճ դիմելաձև):

Քննարկումներին կարող են հրավիրվել նաև դպրոցում դասավանդող այլ ուսուցիչներ, որոնք կարող են օգտակար խորհուրդներ և տեղեկություններ տալ հիմնախնդրի վերաբերյալ:


Այս քայլն առավելապես նպաստում է 21-րդ դարի հեղինակյալ հմտությունների ձևավորմանը.



Հաղորդակցություն Համագործակցություն Արդյունավետություն Նախաձեռնողականություն



Կադարված աշխատանքի արդյունքների ներկայացում և գնահատում



Բոլոր խմբերն իրենց աշխատանքներն ամբողջացնում և ավարտուն տեսքի են բերում՝ առաջնորդվելով նախապես քննարկված և մշակված գնահատման սանդղակի չափանիշներով:

Քանի որ խմբերի աշխատանքները միևնույն նախագծի իրար լրացնող և ամբողջացնող բաժիններն են, նպատակահարմար է դրանք նախապես՝ մինչև ներկայացնելը, միավորել մեկ սահիկաշարում: Յուրաքանչյուր խումբ սահիկաշարում ներկայացնում է իր առաջադրանքը:

Սովորողներին և ուսուցիչներին նախապես տրամադրվում է խմբերի աշխատանքների գնահատման սանդղակը:

Խմբի անդամները (կամ նրանցից մեկը) հերթականությամբ ներկայացնում են կատարված աշխատանքները:

Հարկավոր է ուշադրություն դարձնել, որ խմբի և տղաները, և աղջիկները ակտիվ մասնակցություն ունենան խմբերի աշխատանքները ներկայացնելիս: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ևս պետք է մասնակցեն աշխատանքների ներկայացմանը՝ ներդնելով իրենց հնարավորություններն ու կարողությունները:

Յուրաքանչյուր խմբի ելույթից հետո մյուս երկու խմբերը, ուսուցիչները (ներկաները, մասնակիցները) հարցեր են տալիս, և ծավալվում է քննարկում: Քննարկման ընթացքում խմբերը, մասնակիցները առանձնացնում են աշխատանքի հաջողված կողմերը, նշում, թե ինչը կարելի է բարելավել, և ներկայացնում առաջարկներ:

Այնուհետև, օգտվելով գնահատման սանդղակից, խմբերը և ուսուցիչները գնահատում են ելույթները (ներկայացնող խումբը ևս կարող է գնահատել իր ելույթը, աշխատանքը):

Այս քայլն առավելապես նպաստում է 21-րդ դարի հեղուկացված հմտությունների ձևավորմանը.



Խմբային աշխատանքների գնահատման սանդղակ¹¹

	Բովանդակություն	Ինքնատիպություն	Մուլտիմեդիայի օգտագործում
1-3 Միավոր	Ուսումնասիրությունները չեն առնչվում հիմնախնդրին: Բացակայում է նյութի շարադրման տրամաբանական հաջորդականությունը: Առկա են սխալներ:	Նյութերը ներկայացվում են առանց որոշակի մշակման, սահմանափակ թվով միաբնույթ տեղեկատվական աղբյուրների հիման վրա:	Նյութերում բացակայում են մեդիաաղբյուրներ, մուլտիմեդիոն նյութեր, հղումներ:
4-6 Միավոր	Ուսումնասիրությունները մասամբ են առնչվում հիմնախնդրին: Նյութի շարադրանքը որոշակիորեն տրամաբանական է, սակայն առանձին հարցեր անհասկանալի են:	Նյութերը ներկայացվում են միօրինակ: Առկա են տեղեկատվական տարբեր աղբյուրներ:	Նյութերում օգտագործված են տեղեկատվության մեկ-երկու աղբյուր՝ հղումներով, մեկ-երկու մուլտիմեդիոն նյութ, որոնց ներկայացումը, սակայն, համակարգված չէ:
7-8 Միավոր	Ուսումնասիրություններն առնչվում են հիմնախնդրին: Նյութի շարադրանքը տրամաբանական է, առանձին բաղկացուցիչ մասերը լրացնում են իրար:	Նյութերը բազմազան են, ներկայացվում են հետաքրքիր մոտեցմամբ: Առկա են հեղինակային գաղափարներ: Ներառված է մեծածավալ տեղեկատվություն տարբեր աղբյուրներից:	Նյութերում օգտագործված են մեդիաաղբյուրներ՝ հղումներով, մեդիանյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, ծաղրանկարներ, նկարներ, տեսանյութեր, ձայնագրություններ: Կիրառված մուլտիմեդիոն տարրերը ոչ միշտ են հասկանալի դարձնում հարցերի ընկալումը:
9-10 Միավոր	Ուսումնասիրությունները լիարժեք արտացոլում են հիմնարար հարցերը: Նախագծի բովանդակությունը հասկանալի է, տրամաբանորեն շարադրված, ընկալելի:	Նյութերը բազմազան են, ներկայացվում են յուրօրինակ մոտեցմամբ: Աշխատանքն ացքի է ընկնում առանձնահատուկ գաղափարներով, տեղեկությունները հավաքված են տարաբնույթ աղբյուրներից և ստեղծագործաբար վերլուծված են:	Նյութերում օգտագործված են մեդիաաղբյուրներ՝ հղումներով, մեդիանյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, ծաղրանկարներ, նկարներ, անիմացիաներ, տեսանյութեր, վիճակագրական տվյալներ, սոցիալական ծայնագրություններ: Մուլտիմեդիոն տարրերն ընդգծում են նյութի բովանդակային մասը և հեշտացնում բարդ հարցերի ընկալումը:

Ընդամենը

¹¹ Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Հ., Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Ասողիկ», 2004, 232 էջ:

**Ներկայացման
բանավոր խոսք**

**Գրաֆիկական
ձևավորում**

**Խմբային
աշխատանք**

Աշխատանքի արդյունքները ներկայացնում են ոչ հստակ: Խոսքը կցկտուր է, ոչ լիարժեք:

Աշխատանքը ներկայացված է պարզ շարադրանքի տեսքով: Մեծ ուշադրություն է դարձվել ցուցադրական նյութերին, ինչը խանգարում է բովանդակության ընկալմանը:

Խմբում աշխատանքային պարտականությունները չեն բաշխվել, և որոշ անդամներ ընդհանրապես չեն ընդգրկվել աշխատանքներում: Գործնականում խմբային աշխատանք չի իրականացվել:

Ներկայացնում են աշխատանքի արդյունքները մասամբ: Ներկայացվող նյութին տիրապետում են մասամբ: Խոսքը սահուն է, սակայն բացակայում են հիմնավորումները:

Աշխատանքը ներկայացված է շարադրանքի տեսքով, առկա է մեկ-երկու մեդիանյութ: Գրաֆիկական և մուլտիմեդիոն բաղադրիչները չեն խանգարում բովանդակության ընկալմանը, բայց ոչ միշտ են ճիշտ իրագործված, անհամաչափ են, չկա ընդհանուր ոճ:

Խմբի անդամների մեծ մասը մասնակցել է աշխատանքներին, բայց ծանրաբեռնվածությունը նրանց միջև անհավասարաչափ է բաշխվել:

Լիարժեք ներկայացնում են աշխատանքի բովանդակությունն ու արդյունքները: Թեմայի վերաբերյալ ներկայացնում են լրացուցիչ տեղեկություններ: Խոսքը սահուն է, համոզիչ, հուզական:

Աշխատանքը ներկայացված է համակարգված, հստակ տեսանելի են հիմնական գաղափարներն ու դրույթները: Ձևավորման և բովանդակային տարրերը լրացնում են միմյանց:

Խմբի անդամների մեծ մասն իր ներդրումն ունի ընդհանուր գործում:

Լիարժեք ներկայացնում են աշխատանքի բովանդակությունն ու հիմնական դրույթները: Նյութը ներկայացնում են լիարժեք և բազմակողմանի: Խոսքը սահուն է, համոզիչ, փաստարկված, պատկերավոր և հուզականորեն հագեցած:

Աշխատանքը ներկայացված է համակարգված, մատչելի, և հստակ տեսանելի են հիմնական գաղափարներն ու դրույթները: Մանկավարժական տեսակետից ձևավորման և բովանդակային տարրերը կազմում են մեկ ամբողջություն:

Աշխատանքներին հավասարապես մասնակցել են խմբի բոլոր անդամները:



Գործողությունների առաջարկ



Բոլոր խմբերն իրենց աշխատանքներն ամբողջացնելուց, ավարտուն տեսքի բերելուց և քննարկելուց հետո համատեղ ջանքերով մշակում են հիմնախնդրի լուծմանն ուղղված գործողությունների առաջարկներ: Առաջարկները պետք է ունենան իրականացման հստակ ժամանակացույց, հանձնարարությունների կատարման դերաբաշխում, պատասխանատուներ, անհրաժեշտ նյութեր և ռեսուրսներ:

Առաջարկները տեսանելի և հասանելի պետք է լինեն շահագրգիռ բոլոր կառույցներին, համայնքի բնակիչներին ու հանրությանը:

Օրինակ

- Սոցիալական հոլովակների, սահիկաշարի պատրաստում և տեղադրում դպրոցի կայքէջում:
- Դասընթացների կազմակերպում սովորողների, համայնքի բնակիչների և խնդրով մտահոգ քաղաքացիների համար:
- Կլոր սեղան քննարկումների նախաձեռնում շահագրգիռ բոլոր կառույցների մասնակցությամբ:
- Միջոցարոցական, համայնքային միջոցառումների, մրցույթների կազմակերպում, օրինակ՝ «Պահպանենք մեր բնությունը» թեմայով:
- Բուկլետների պատրաստում և տարածում դպրոցում, համայնքում, մարզում, բնակիչների շրջանում:
- Ֆլեշմոբների կազմակերպում, տարածում համապատասխան կայքերում:
- Հիմնախնդիրների թեմաներով ցուցահանդեսների կազմակերպում:
- Հիմնախնդիրը ներկայացնող պաստառների ստեղծում:
- Խմբերի հետազոտություններից դուրս բերված առաջարկ պատկան մարմիններին (համայնքապետարան, մարզպետարան):
- Մասնակցություն անտառահատման հիմնախնդրի լուծմամբ զբաղվող կառույցների աշխատանքներին:
- Մասնակցություն ծառատունկի միջոցառումներին և այլն:

Վերը թվարկված ծրագրային տարաբնույթ առաջարկների ցանկը ստեղծում է լավագույն հնարավորությունը՝ «Անտառահատման վնասակար հետևանքները» հիմնախնդրի լուծման աշխատանքներին ներգրավելու բոլոր սովորողներին՝ ըստ իրենց կարողությունների, հնարավորությունների և նախասիրությունների:

Որպես արդյունք՝ սովորողները ակտիվ և գործուն մասնակցություն կունենան իրենց համայնքի, մարզի, երկրի առջև ծառացած իրական և առաջնահերթ խնդիրների բարձրաձայնմանն ու լուծմանը:

Այս քայլն առավելապես նպաստում է 21-րդ դարի հետևյալ հմտությունների ձևավորմանը.



Համագործակցություն



Հաղորդակցություն



Ստեղծարարություն



Արդյունավետություն



Տեխնոլոգիական գրագիտություն

Առաջարկում ենք նախագծային աշխատանքի արդյունքները (սահիկաշարերը և գործողությունների ծրագրի առաջարկը) տեղադրել դպրոցի կայքէջում, տարածել սոցիալական ցանցերում:

Սիրելի ուսուցիչներ, հուսով ենք, որ սույն ձեռնարկը կարող է օգտակար լինել թե՛ կլիմայի փոփոխության, թե՛ այլ թեմաներով ուսումնական նախագծային աշխատանքներ կազմակերպելիս:

Հուսով ենք, որ այս ծրագիրը կնպաստի բնապահպանական հիմնախնդիրները գիտակցող, պատասխանատու քաղաքացու ձևավորմանը, կզարգացնի սովորողների կարողությունները և կխորացնի «Մենք կարող ենք աշխատել միասին՝ ավելի լավը դարձնելու մեր համայնքը, մեր մարզը, մեր երկիրը» ըմբռնումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ԱԲԳ Կլիմայի փոփոխության ուսումնական ձեռնարկ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, Երևան, 2013, 49 էջ:
- Խաչատրյան Մ., Դավթյան Մ., Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Զանգակ», 2019, 144 էջ:
- Կլիմայական արկղիկ, ուսումնական ձեռնարկ, Երևան, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, 2020, 344 էջ:
- Պետրոսյան Ա., Խաչատրյան Հ., Մարդու թրաֆիքինգ և շահագործում, ուսումնաօժանդակ ձեռնարկ դասախոսների և ուսանողների համար, Երևան 2013, 143 էջ:
- Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Հ., Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Ասողիկ», 2004, 232 էջ:
- Քեռշկերյան Շ., Ավագյան Ա. Մենթորական աջակցության մեթոդաբանություն և գործիքակազմ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ: «Դասավանդիչ Հայաստան» կրթական հիմնադրամ, Երևան, 2021, 72 էջ
- D. Jonson, R. Jonson & Holubec E., «Cooperation in the Classroom», Boston, MA: Allen and Bacon).
- Lai, R. E. and Viering, M., «Assessing 21st Century Skills: Integrating Research Findings», National Council on Measurement in Education, Pearson, Vancouver, 2012.
- «Աշխարհը, որ մենք ենք ուզում», TWW A4 HiRes ARM (unicef.org)
- Կայուն զարգացման նպատակները (ԿՁՆ), www.un.org/hy/p/sustainabledevelopmentgoals
- Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021 թ., www.arlis.am/documentview.aspx?docid=149788
- Փարիզի համաձայնագիր, www.irtek.am/views/act.aspx?aid=92464
- www.un.org/ru/actnow/facts-and-figures
- www.unclearn.org/wp-content/uploads/library/unfccc176_rus.pdf
- CAST (2018). Universal Design for Learning Guidelines version 2.2. Retrieved from udlguidelines.cast.org

ՀԱՎԵԼՎԱԾ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ (ՈՒՀՁ) ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ



Ուսումնառության համընդհանուր ձևավորումը կազմված է երեք հիմնական սկզբունքներից.

- նյութի ներկայացման բազմազանություն,
- գիտելիքի արտահայտման բազմազանություն,
- ներգրավման ձևերի բազմազանություն:

Նյութի ներկայացման ձևերի բազմազանություն

Կարևոր է ապահովել տարբերակներ տեղեկության ընկալման և ըմբռնման համար, որպես-
զի դասարանում ուսուցման բովանդակությունը լինի մատչելի և հասանելի բոլորի համար:

ՈՒՀՁ ուղենիշներ

- Ստեղծել նյութի ցուցադրումը հարմարեցնելու հնարավորություններ, ընդ որում՝ ապահովել այլընտրանքներ լսողական և տեսողական տեղեկատվության համար: Օրինակ՝ բացի տպագրված նյութը ներկայացնելուց, կարելի է այն ձայնագրել, գրաֆիկական պաստառներ ստեղծել տարատեսակ համակարգչային ծրագրերի

միջոցով, որպեսզի դրանք հասանելի լինեն նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին ու միևնույն ժամանակ արձագանքեն սովորելու բազմազան ոճերին ու բազմաբնույթ մտածողությանը: Այսպիսով՝ ստեղծել ուսուցման այնպիսի միջավայր, երբ գիտելիքի ներկայացման գործընթացում ակտիվանում են սովորողների հնարավորինս բոլոր զգայարանները, ինչն էլ նպաստում է նրանց՝ ուսումնական նյութի առավել խոր ընկալմանն ու յուրացմանը:

- Պարզեցնել բառապաշարն ու խորհրդանիշները, լեզվական կառույցներն ու ապահովել միջլեզվական հասանելիություն: Օրինակ՝ ընդգրկել օժանդակ միջոցներ՝ նկարներ, բացատրություններ, թարգմանություններ, պատկերային այլընտրանքներ, ընդգծել իմաստային կապերը, որպեսզի տեղեկությունը ցուցադրվի բազմազան միջոցներով:
- Ակտիվացնել գիտելիքը նախքան նոր նյութը ներկայացնելը. օրինակ՝ նոր թեմայի վերաբերյալ փոքրիկ թեստ հանձնարարել: Կարելի է նաև ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ նոր նյութը ուսումնասիրելուց առաջ, նախապես սովորեցնել անհրաժեշտ հասկացություններն ու կապեր ստեղծել առարկաների և կամ համանման հասկացությունների միջև:
- Ընդգծել կաղապարները, հանգուցային հասկացությունները, դրանց միջև առկա կապերը՝ նպաստելու համար դրանց մտապահմանն ու ըմբռնմանը:
- Ուղղորդել տեղեկությունը գործածելու, մտապատկերելու և հմտորեն կիրառելու գործունեությունը: Աշակերտին պետք է ներկայացնել ամբողջական առաջադրանքի տեսողական քարտեզը կամ լիարժեք քայլերը, կարևոր է նաև մեծ առաջադրանքը բաժանել փոքր ու իրար հերթափոխող, տրամաբանորեն միմյանց վրա կառուցվող քայլերի:
- Առավելագույնի հասցնել գիտելիքի ընդհանրացումն ու ոլորտից ոլորտ փոխանցումը: Կարևոր է աշակերտների համար հնարավորություններ ստեղծել՝ յուրացված գիտելիքն ու հմտությունները կիրառելու բազմապիսի իրավիճակներում:

Ուսումնական գործունեության և գիտելիքն արտահայտելու ձևերի բազմազանություն

Կարևոր է մտածել ընտրված առաջադրանքների, գիտելիքի արտահայտման եղանակների և գործունեության ձևերի ու միջոցների հարմարեցման և այն մասին, թե սովորողներին ինչպիսի աջակցություն ենք տրամադրում, որպեսզի հասնեն ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին:

ՈՒՇՁ ուղենիշներ

- Տարբերակել ֆիզիկական միջավայրում ուղղորդվելու և կողմնորոշվելու մեթոդները. օրինակ՝ ապահովել այլընտրանքներ սահմանված ժամանակի և շարժողական գործունեություն (motor skills) պահանջող առաջադրանքների կատարման համար: Ինչպես նաև տարբերակել պատասխանելու (արձագանքելու) մեթոդները. օրինակ՝

աշակերտները կարող են օգտագործել որոշակի նշաններ (ժեստեր), որոնց միջոցով ներգրավումը կդառնա ավելի տեսանելի, իսկ ընթացիկ գնահատումը՝ ավելի արագ:

- Օժանդակել տեխնոլոգիական միջոցների և գործիքների հասանելիությանը: Սարքավորումների ընտրությունները պետք է բխեն սովորողների կարիքներից, այլապես դրանց ինքնանպատակ կիրառությունը կարող է խոչընդոտներ առաջացնել ուսումնառության համար:
- Կիրառել հաղորդակցման բազմաթիվ միջոցներ: Չպետք է ստիպել, որ բոլոր աշակերտներն իրենց գիտելիքներն ու ունակությունները նույն կերպ արտահայտեն, որպեսզի չսահմանափակենք նրանց կարողությունները:
- Օգտագործել ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձևավորման և ստեղծման բազմապիսի միջոցներ ու սովորողներին ապահովել այնպիսի նյութերով կամ գործիքներով, որոնք կամրջում են առաջադրանքի իրականացումն ու աշակերտների ունակությունները:
- Նպաստել գիտելիքի կիրառման սահունությանը և հմտությանը աստիճանական օժանդակության միջոցով: Բացի նոր գիտելիքի ներկայացումից՝ շատ կարևոր է, որ ուսուցիչները բավարար ժամանակ տրամադրեն սովորողների յուրացրած նյութի իմաստավից կրկնությանն ու այն հմտության հասցնելուն:
- Ուղղորդել և աջակցել սովորողների՝ նպատակներ սահմանելու, պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացներին: Ուսուցիչներն աստիճանական աջակցություն պետք է ցուցաբերեն աշակերտներին, որպեսզի նրանք աստիճանաբար դրսևորեն ինքնուրույնություն՝ սահմանելով նպատակներ ու ծրագրելով մոտեցումներ, որոնցով կկարողանան հասնել իրենց նպատակներին:
- Դյուրինացնել և օժանդակել տեղեկատվության և ռեսուրսների ղեկավարումը: Կարևոր է օգնել աշակերտներին՝ դասակարգելու և կազմակերպելու տեղեկույթը:
- Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը՝ սովորողներին տրամադրելով հետադարձ կապ ճիշտ ժամանակին և որոշակի ուղղորդումներով, ինչը հնարավորություն կտա նրանց ինքնուրույն շտկումներ կատարելու ու դիտարկելու սեփական առաջընթացը:

Ներգրավման ձևերի բազմազանություն

Նկատի ունենալով, որ սովորողները տարբերվում են ընդգրկման և ներքին հետաքրքրությունների դրսևորման տեսանկյունից՝ շատ կարևոր է նրանց տրամադրել տարբերակներ և ընտրության հնարավորություն՝ խթանելով նրանց սովորելու մոտիվացիան ու ջանքերի շարունակականությունը: Կարևոր է նաև զարգացնել սովորողների ինքնատիրապետման ու ինքնակարգավորման հմտությունները, որոնք նրանց կօգնեն վերահսկելու սեփական զգացմունքները:

ՈՒՆՁ ուղենիշներ

- Ապահովել բավարար հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար: Սա ենթադրում է աշակերտներին տալ ընտրության միջոցներ, որոնցով կարելի է հասնել միևնույն նպատակին՝ նրանց մեջ զարգացնելով ինքնուղղորդումն ու ինքնուրույնությունը:
- Ուսումնառությունը կապել սովորողների կենսափորձի և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը: Կարևոր է աշակերտներին տրամադրել առաջադրանքներ, որոնք ենթադրում են ակտիվ մասնակցություն, հետազոտություն ու միևնույն ժամանակ խթանում են ստեղծագործական ունակություններն ու խնդիրներին նոր լուծումներ փնտրելու մղումը:
- Նվազեցնել սպառնալիքները, անհանգստացնող երևույթներն ու ցրվածությունը: Կարևոր է դասարանում ստեղծել աջակցող ու ընդունող միջավայր, քանի որ սթրեսի առկայությունը խոչընդոտում է ուսումնառությունը:
- Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը: Անհրաժեշտ է, որ աշակերտը հստակ գիտակցի, թե ինչու է այդ վերջնարդյունքին հասնելը կարևոր, ու դա որքանով կօգնի նրան դառնալու առավել մրցունակ:
- Տարբերակել պահանջներն ու ռեսուրսները ուսումնառության օպտիմալ բարդության համար: Բոլոր աշակերտները պետք է հնարավորություն ունենան կատարելու անհրաժեշտ բարդության առաջադրանքներ, որոնք և՛ մարտահրավեր են նետում սովորողներին, և՛ տրամադրում են անհրաժեշտ ռեսուրսները՝ դրանք հաղթահարելու համար:
- Խրախուսել համագործակցությունն ու հաղորդակցությունը: Անհրաժեշտ է ստեղծել համագործակցության միջավայր, ձևավորել խմբեր՝ հստակ դերերով ու գործողությունների ծրագրով:
- Տրամադրել դեպի կատարյալն ու ավելի լավն ուղղորդող հետադարձ կապ: Կարևոր է աշակերտներին սովորեցնել քննադատաբար նայել իրենց և ուրիշների աշխատանքներին ու նրանց տրամադրել շարունակական կառուցողական հետադարձ կապ:
- Խթանել մոտիվացիան ու զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները: Ինքնատիրապետման ու ինքնակարգավորման հմտությունները զարգացնելու միջոցով սովորեցնում ենք աշակերտներին վերահսկել սեփական զգացմունքները, գտնել լուծումներ տարբեր իրավիճակներում և լինել հանդուրժող ու կառուցողական:
- Զարգացնել ինքնագնահատման և ինքնավերլուծության ունակությունները: Կարևոր է վարքի ինքնագնահատման և սեփական առաջընթացի մեխանիզմներ կիրառելը. օրինակ՝ ինքնագնահատման թերթիկները, որոնք աշակերտներին օգնում են վերլուծելու և մշտադիտարկելու սեփական վարքային դրսևորումները, ինչպես նաև ձևավորելու իրենց ապագա գործողությունները:

ՅՈՒՆԻՍԵՖ

Պետրոս Ադամյան փող. 14

Երևան, 0010, ՀՀ

yerevan@unicef.org

www.unicef.am

© ՅՈՒՆԻՍԵՖ 2022